

Պետական կադաստրի համակարգի հարգելի գործընկերներ

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Գեոդեզիստի և հողաշինարարի օրվա կապակցությամբ:

Վստահ կարելի է ասել, որ պետական կադաստրի համակարգը ժամանակակից կայացած կառույց է: Մենք կարող ենք հպարտորեն արձանագրել նաև, որ կադաստրի համակարգը կատարել է և շարունակում է կատարել անգնահատելի աշխատանքներ իրավական պետության կայացման գործում:

Համակարգում դեռ կան չլուծված խնդիրներ, սակայն մենք քայլ առ քայլ միջոցներ ենք ձեռնարկում այդ խնդիրների լուծման համար և օրեցօր բարձրացնում ենք քաղաքացիների սպասարկման որակը:

Հարգելի գործընկերներ, մենք բոլորս մեր կարողությունների և հնարավորությունների սահմաններում պարտավոր ենք ամեն ինչ անել համակարգի հետագա զարգացման և բարգավաճման համար:

Մաղթում եմ Ձեզ հաջողություններ, արդյունավետ աշխատանք և հզոր կամք Ձեր դժվարին աշխատանքների իրականացման գործընթացում:

Կ.Պետրոսյան